# Դառնալ Հիսուս Քրիստոսի աշակերտը

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

## Վերցրեք ձեր խաչը

Կարդացեք Ղուկաս 9.23 հատվածը և փնտրեք Փրկիչի պահանջները՝ Նրա աշակերտը դառնալու համար:

- Այս հատվածն ի՞նչ է սովորեցնում Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտը լինելու մասին:

Այս հատվածն ակնարկում է այն ֆիզիկական խաչը, որը Հիսուս Քրիստոսը կրեց և որին բարձրացվեց՝ Իր Հոր կամքը իրականացնելու համար: Չնայած մեզանից չի պահանջվում կրել ֆիզիկական խաչը, մեզանից պահանջվում է հետևել Տիրոջը՝ կատարելով Երկնային Հոր՝ մեզ համար նախատեսված կամքը, նույնիսկ երբ դա դժվար է:

Կարդացեք Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը, Մատթեոսի 16.26 (Մատթեոսի 16.24, ծանոթագրություն ե) և ուշադրություն դարձրեք, թե մեզ համար ինչ է նշանակում վերցնել մեր խաչը և հետևել Հիսուս Քրիստոսին:

Երեց Ուլիսես Սոարեսը Տասներկու Առաքյալների Քվորումից բացատրել է, թե ինչ է նշանակում վերցնել մեր խաչը:

Սուրբ գրություններից մենք իմանում ենք, որ նրանք, ովքեր ցանկանում են վերցնել իրենց խաչը, սիրում են Հիսուս Քրիստոսին այնպես, որ հրաժարվում են ամեն անաստվածությունից և ամեն աշխարհիկ ցանկությունից ու պահում են Նրա պատվիրանները:

Եթե մենք վճռական լինենք՝ թողնելով բոլոր բաները, որոնք հակասում են Աստծո կամքին, զոհաբերելով այն, ինչ մեզանից պահանջվում է, ձգտելով հետևել Նրա ուսմունքներին, ապա դա կօգնի մեզ մնալ Հիսուս Քրիստոսի ավետարանի ճանապարհին, նույնիսկ ձախորդությունների, մեր հոգիների թուլության կամ սոցիալական ճնշման ու աշխարհիկ փիլիսոփայությունների առկայության պարագայում, որոնք դեմ են Նրա ուսմունքներին: (Ուլիսես Սոարես, «Վերցրեք ձեր խաչը», *Ensign* կամ *Լիահոնա*, նոյեմբեր 2019, 113–14)

- Դուք ինչո՞ւ պետք է հրաժարվեք ամեն անաստվածությունից և ամեն աշխարհիկ ցանկությունից ձեր կյանքում:
- Անաստվածությունից և ամեն աշխարհիկ ցանկությունից հրաժարումը ինչո՞վ է նման խաչ կրելուն:
- Ձեր կարծիքով, «ձեր խաչը վերցնելը» ինչպե՞ս կօգնի ձեզ դառնալ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտը:

## Կորցրեք ձեր կյանքը՝ այն փրկելու համար

Կարդացեք Ղուկաս 9.24-25 հատվածները՝ փնտրելով, թե Տերն ինչ է ուսուցանել Իր աշակերտը լինելու մասին:

- Ի՞նչ են այս հատվածները սովորեցնում Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտը լինելու մասին:
- Ձեր կարծիքով, մարդիկ, ովքեր կենտրոնանում են իրենց սեփական կամքի և եսասիրական ցանկությունների վրա, ինչպե՞ս պետք է, ի վերջո, «կորցնեն» իրենց կյանքը:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, որ մենք կփրկենք մեր կյանքը, երբ կորցնենք այն՝ հանուն Նրա:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը (1927–2018) բացատրել է, թե ինչ է նշանակում կորցնել մեր կյանքը հանուն Հիսուս Քրիստոսի:

Ովքեր միայն իրենց համար են ապրում,ի վերջո, կծկվում են, և, պատկերավոր ասած, կորցնում են իրենց կյանքը, մինչդեռ նրանք,

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *Becoming a Disciple of Jesus Christ*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.

> ովքեր կորցնում են իրենց մյուսներին ծառայելու մեջ, աճում ու ծաղկում են՝ արդյունքում պահպանելով իրենց կյանքը: (Թոմաս Ս. Մոնսոն, «Ի՞նչ եմ ես արել ինչ-որ մեկի համար այսօր» *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2009, 85)

- **Դուք ճանաչո՞ւմ եք մեկին, ով որոշել է կորցնել իր կյանքը հանուն Հիսուս Քրիստոսի: Ի՞նչ ազդեցություն է ունեցել այս որոշումը այդ անձնավորության վրա:**
- **Ինչպե՞ս եք դուք օրհնված այն բանի շնորհիվ, որ Հիսուս Քրիստոսը ապրել է այս հատվածներում ներկայացված ուսմունքների համաձայն:**

## Հաղթահարեք շեղումներն ու արդարացումները

Կարդացեք Ղուկաս 9.57-62 հատվածները՝ փնտրելով, թե ինչ էին ցանկանում անել որոշակի մարդիկ՝ նախքան Փրկչին հետևելը:

- **Ի՞նչ են այս հատվածները սովորեցնում Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտը լինելու մասին:**

Հիսուս Քրիստոսը չի նշել, որ սխալ է սգալ սիրած մարդու մահը կամ հրաժեշտ տալ ընկերներին և ընտանիքին: Դրա փոխարեն Նա կարևոր դաս էր ուսուցանում աշակերտության գնի մասին:

**Նախագահ Հովարդ Վ. Հանթերը (1907–1995) բացատրել է Ղուկաս 9.62 հատվածում ներկայացված գութանի համեմատությունը:**

> Ուղիղ ակոս կամ [խրամատ] փորելու համար հողագործը պիտի աչքը պահի իրենից առաջ գտնվող մի կետի: Դա նրան պահում է ճիշտ ընթացքի մեջ: Սակայն, եթե պատահում է, որ հետ է նայում տեսնելու, թե որտեղ է եղել, նրա շեղվելու հավանականությունը մեծանում է: Արդյունքում ստացվում են կոր և անկանոն ակոսներ: Եթե մեր եռանդը կենտրոնացած չէ մեր անցյալի վրա, այլ առջևի հավերժական կյանքի և փրկության հրճվանքի վրա, մենք անկասկած կհասնենք դրան: (Հովարդ Վ. Հանթեր, «Ես «կենդանի» անդա՞մ եմ» *Ensign*, մայիս 1987, 17)

- **Որո՞նք են Տիրոջը չհետևելու տարածված պատճառները մեր օրերում:**
- **Ինչպե՞ս կարող եք կենտրոնանալ այն բանի վրա, որ Փրկիչը ձեզ խնդրել է անել հիմա և ապագայում:**



© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *Becoming a Disciple of Jesus Christ*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.